Արձանագրություն N 2
«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստից

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Միծեռնակաբերդի զբոսայգի 1 «22» «օգոստոս» 2017թ.
ժ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան
Հանձնաժողովի անդամներ՝
Սեյրան Զորողլյան- պահեստապետ
Կորյուն Սերոբյան- գլխ. էներգետիկ
Արմենակ Ծովանյան- սպասարկման ծառայության պետ
Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

I. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/6 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

Համաձայն ՀՀ Կառավարության որոշման 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 46-րդ կետի հրավիրվել է հայտերի գնահատման նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ.

1.1 Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 2.4 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներին:

1.2 Մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

II. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/6 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատման արդյունքների հաստատման և ամփոփման մասին**

2.1 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել
Թիվ 1,2 չափաբաժինների մասով «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ին

2.2 Ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր օրենքով սահմանված կարգով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն տվյալ դեպքում անգործության ժամկետ կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հայտերի գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակել տեղեկագրում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան

Անդամներ՝

Սեյրան Զորողլյան

Կորյուն Սերոբյան

Արմենակ Ծովանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան